

ԿԱՐԾԻՔ

Էմիլ Հրաշյախ Օրդուխանյանի՝

«Քաղաքական մշակույթի Եվոպուցիսան Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացներում» ԽԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեման քաղաքագիտության կենտրոնում գտնվող, և՝ տեսության ու պատմության, և՝ քաղաքական ինստիտուտների և գործընթացների բնագավառում մշտական արդիական հիմնահարցերից է: Քաղաքական մշակույթը և քաղաքական գործընթացները քաղաքագիտության հիմնական օբյեկտներից են, իսկ ՀՀ-ում այդ կարևորագույն երևույթների գարգացման ու փոխակերպման ուսումնասիրությունը միանշանակ կարևոր է:

Մինչդեռ, ատենախոսության կարևորագույն բաղադրիչն՝ գիտական նորույթի կարգավիճակին հավակնող դրույթներին և եզրակացություններին ծանոթանալով՝ անհրաժեշտ եմ համարում անմիջապես անցում կատարել հետազոտական մասի և նորույթների քննարկմանը, որոնցից կախված է ատենախոսության որակը և դրա գնահատումը:

Դիտողություններ՝ հետազոտության խնդիրների վերաբերյալ.

1. «Ուսումնասիրել և բացահայտել քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալները ՀՀ-ում» (Ատենախոսություն, էջ 10). սա արդյո՞ք նշանակում է, որ Հայաստանում քաղաքական մշակույթը դեռ չի ձևավորվել: Բացի այդ, ՀՀ-ում քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալներն արդեն բացահայտված և ուսումնասիրված են այն նույն հայաստանյան հեղինակների կողմից, ում աշխատությունները հիշատակվել են տեսական մասում:
2. Հետազոտության օբյեկտը «հետխորհրդային շրջանում հայ հասարակության քաղաքական մշակույթն է: Հետազոտության առարկան հետխորհրդային շրջանում հայ հասարակության քաղաքական մշակույթի Եվոպուցիսայի ազդեցությունն է ՀՀ քաղաքական գործընթացների վրա» (Ատենախոսություն, էջ 10): Այդ խմաստով հետազոտության մի քանի խնդիրներ, ըստ Էռլեյան, առանձին, անկախ հետազոտական տիրույթներ են, իսկ դրանց օբյեկտն ու առարկան այլ է, քան` ատենախոսության օբյեկտն ու առարկան, այդ լավում. «Հետազոտել ընտրական գործընթացի դիմամիկան և վեր հանել ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրները ՀՀ-ում», «Բացահայտել քաղաքական գործընթացի արդյունավետացմանը խոչընդոտող հիմնախնդիրները ՀՀ-ում», «Հետազոտել քաղաքական գործընթացի տեսական և մելքոնաբանական հիմքերը համեմատական վերլուծության միջոցով».

Դիտողություններ՝ պաշտպանությանը ներկայացվող հիմնական արդյունքների և դրանց գիտական նորույթի վերաբերյալ.

1. առաջին արդյունքին վերաբերող պարբերության մաս է կազմում հետևյալ եզրակացությունը (Ատենախոսություն, էջ 12, Սեղմագիր, էջ 9). «**քրոլոր հասարակություններում առկա միակ համընդհանուր տարրը քաղաքական խոսույթն է, որը կարող է հիմք ծառայել քաղաքական մշակույթի առավել ամբողջական հետազոտության համար՝ որպես նոր ուղղություն»: Հասկանալի է, որ խոսքը քաղաքական մշակույթի «միակ համընդհանուր տարր» համարվող քաղաքական խոսույթի մասին է: Մինչդեռ, բոլոր հասարակություններում այս կամ այն չափով առկա են և դրսևորվում են քաղաքական մշակույթի բազում տարրեր, այդ թվում քաղաքական շահեր և արժեքներ, գիտելիքներ, պատմական փորձն ու քաղաքական վարքի մոդելներ, քաղաքական սիմվոլներ, ավանդույթներ, քաղաքական լեզուն, կարծրատիպեր, և այն: Այնպես որ քաղաքական խոսույթը տարրեր հասարակություններում քաղաքական մշակույթի միակ համընդհանուր տարրը չէ: Բացի այդ, քաղաքական խոսույթն արտացոլում է (այն է՝ որոշ չափով) քաղաքական մշակույթի լեզուն, քաղաքական հաղորդակցությունը: Քաղաքական մշակույթի բոլոր տարրերը հանգեցնելով քաղաքական խոսույթին՝ տեղի կունենա քաղաքական մշակույթի և քաղաքական խոսույթի անընդունելի նույնացում:**
2. **Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներից առաջինը հնչում է հետևյալ կերպ.** «Քաղաքական մշակույթի հայեցակարգային հիմքերի համայիր հետազոտության և համարման արդյունքում քաղաքական մշակույթը կարելի է սահմանել որպես քաղաքական գաղափարների, գիտելիքների, ավանդույթների և արժեքների, քաղաքական մասնակցության և վարքագծի մոդելների, քաղաքական գիտակցության և սոցիալականացման փուլերի ու մակարդակների, քաղաքական հաղորդակցության միջոցների, քաղաքական ինստիտուտների փոխհարաբերակցության ամբողջություն, որը պայմանավորում է քաղաքական գործնթացները և արտահայտվում է քաղաքական խոսույթի միջոցով» (Ատենախոսություն, էջ 13, Սեղմագիր, էջ 10): Փաստորեն՝ տեսնում ենք քաղաքական մշակույթի դասական սահմանում /ընդունված և ներկայացվող քաղաքագիտության դասագրքերում/, որին գումարվել է «և արտահայտվում է քաղաքական խոսույթի միջոցով» քառակապակցությունը՝ դրանով ցուցադրելով սույս սահմանման նորույթը: Նորից հիշեցնենք. քաղաքական խոսույթը քաղաքական լեզվի և հաղորդակցման արտաքին դրսևորումն՝¹, իսկ քաղաքական հաղորդակցումը՝ քաղաքական գործնթացի տեսակներից մեկն է: Այն պայմանավորված է քաղաքական մշակույթի առանձնահատկություններով, սակայն սխալ է նշել, թե քաղաքական մշակույթն իր բոլոր տեսակներով և դրսևորումներում արտահայտվում է քաղաքական խոսույթում, առավելև՝ համարժեքորեն: Այլ կերպ ասած՝ ամեն ինչ չէ, ինչ տեղի է ունենում քաղաքականության մեջ՝ ասվում է, և ամեն ինչ չէ, ինչ ասվում և քննարկվում է՝ այնպես է, ինչպես որ իրականում կա: Դարձյալ քաղաքական գործնթացներն ու քաղաքական մշակույթը նույն բանը չեն, ինչ

¹ Տե՛ս, օրինակ. Paul Chilton (2004). Analyzing Political Discourse: Theory and Practice. NY: Routledge; Christina Schaffner (1996). Editorial: Political Speeches and Discourse Analysis, Current Issues in Language and Society, 3:3, 201-204.

քաղաքական խոսույթն է, և դրանով միայն մասամբ են արտացոլվում: Քաղաքական խոսույթը՝ հրապարակային քաղաքականության դրսևորումներից մեկը, սխալ է նույնացնել քաղաքական մշակույթի խորքային տարրերի, այդ թվում՝ արժեքների, վարքի, մոտեցումների, գործընթացների հետ: Իհարկե, մենք ունենք մեր արդի հայաստանյան քաղաքական «մշակույթը՝» ամբողջովին հրապարակային խոսույթի դաշտ բերված, քննարկման առարկա դարձած (անգամ խիստ գաղտնի անվտանգային հիմնահարցերը ներառյալ), սակայն դա կարելի է դիտարկել միայն որպես քաղաքական մշակույթի մոդելներից մեկը, և ոչ թե քաղաքական մշակույթի «նոր» սահմանում:

3. **Պաշտպանությանը ներկայացվող դրույթների բաժնի երկրորդ կետում հեղինակը, մասնավորապես, գրում է. «Այս տեսանկյունից հետխորհրդային <<-ում ընդհանուր քաղաքական գործընթացի ուսումնասիրության համար առանձնապես նախընտրելի է խոսութային վերլուծությունը» (Ատենախոսություն, էջ 13, Մեղմագիր, էջ 10): Ապա հեղինակը գրում է, որ «քաղաքական մշակույթի ձևավորման և քաղաքական պրակտիկայում դրա դրսւորման առումով քավականին մեծ է քաղաքական խոսույթի ազդեցությունը», այսիրն՝ նա այսուեղ արդեն ճիշտ է նշում, որ քաղաքական խոսույթը միայն մասամբ /թեկուզ վերացականորեն ասված՝ «քավականին մեծ»/ է ազդում քաղաքական մշակույթի վրա: Հարց է առաջանում. ի՞նչ է ուսումնասիրում ատենախոսը խոսույթի միջոցով՝ քաղաքական գործընթացը, թե՞ քաղաքական մշակույթը: Եթեն երկուսն էլ, ապա դարձյալ ակնհայտ է քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացների ու քաղաքական խոսույթի միջև սահմանների անհստակություն, ընդհանուրի և մասնավորի, պատճառահետևանքային կապերի անորոշություն:**
4. **Պաշտպանությանը ներկայացվող դրույթների բաժնի երրորդ կետը. «Քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) մեթոդը, որտեղ հաշվի են առնվում քաղաքական գործընթացի առանձնահատկությունները, քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացի և քաղաքական խոսույթի՝ որպես իրար փոխրացնող քաղաքագիտական գիտակարգերի սինթեզի հիման վրա ձևավորված չափման գործիք է» /Ատենախոսություն, էջ 14/: Պետք է նշել, որ այն, ինչ հեղինակը ներկայացնում է որպես նոր՝ «Քաղաքական մշակույթի խոսութային չափման մեթոդ», իրականում քաղաքագիտության և հարակից գիտություններում քաջ հայտնի՝ դիսկուրս-վերլուծության (discourse-analysis) մեթոդն է, որի միջոցով չափում է քաղաքական գործընթացների, մշակույթի, վարքի, ընկալումների արտացոլումը խոսույթում², այն, ինչ անում է նաև ինքը հեղինակը: Վարքի, ընկալումների արտացոլումը խոսույթում², այն, ինչ անում է նաև ինքը հեղինակը:**
5. Նոյն՝ վերոնշյալ դրույթի վերաբերյալ. ի՞նչ է նշանակում «քաղաքական մշակույթը, քաղաքական գործընթացը և քաղաքական խոսույթը՝ որպես իրար փոխրացնող քաղաքագիտական գիտակարգեր»: Գիտակարգը սահմանվում է որպես գիտություն, որն ունի իր օբյեկտը, առարկան, մեթոդաբանությունը, և դասավանդվում է բուհում:

² Տե՛ս, օրինակ. HARTFORD, B. A. S.; OBENG, S. G. **Topics in Political Discourse Analysis**. New York: Nova Science Publishers, Inc., 2008; SCHÄFFNER, C.; CHILTON, P. A. **Politics as Text and Talk: Analytic Approaches to Political Discourse**. Amsterdam: John Benjamins Publishing Co, 2002.

Քաղաքագիտությունն ինքն է սահմանվում որպես գիտակարգ, որը դասավանդվում է, իսկ վերոնշյալ քաղաքական երևույթները քաղաքագիտության՝ որպես գիտակարգի առարկայական տիրույթներն են, և գիտակարգեր չեն կարող լինել³: Իսկ ի՞նչ է նշանակում, թե իրենք միմյանց լրացնում են: Կրկնենք. քաղաքական խոսույթը /դիսկուրսը/ քաղաքական հաղորդակցման արտաքին դրսերում է, իսկ իր հերթին քաղաքական հաղորդակցումը քաղաքական գործնաթացի տեսակ է: Ընդհանուրը և մասնավորը չեն կարող փոխարացման մեջ լինել՝ սա տրամաբանության կանոնի խախտում է:

6. Դիտենք նորույթների հաջորդ և ծավալուն՝ «Թավշյա հեղափոխությանը» վերաբերող կետի միայն վերջին նախադասությունը, որն այս կետում առավել կոնկրետ միտք է. «ՀՀ-ում քաղաքական կարգի կայունացման և արդիականացման գործնաթացի ինստիտուցիոնալացման համար անհրաժեշտ է քարձրացնել հանրության քաղաքական գիտակցությունը, որը պետք է նախաձեռնեն թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական շրջանակները» (Ատենախոսություն, էջ 14, Սեղմագիր, էջ 11): **Սա գիտական նորույթ է:** Ի՞նչ է նշանակում քարձրացնել հանրության քաղաքական գիտակցությունը: Որքա՞ն քարձրացնել, ինչպե՞ս: Ցավոք՝ գիտական նորույթին նման մոտեցում վերջին տարիների ատենախոսություններում հաճախակի է հանդիպում, և այն օբյեկտիվորեն անընդունելի է:
7. Որպես նորույթ ներկայացվող հերթական կետը. «Հայաստանյան քաղաքական մշակույթը ներառում է մասնակցային և ավտորիտար մշակույթի տարրեր, որտեղ վերջին տարրի ազդեցությունը մասամբ թուլացել է 2018թ. հեղափոխական գործնաթացի արդյունքում: ՀՀ-ն ունի իրատեսական հեղափոխություններ ժողովրդավարական մշակույթն ամրապնդելու և հետևապես՝ իր օրինակով նաև կարող է նպաստել եվրասիական բյուկի մյուս երկրներում ժողովրդավարական գործնաթացների արդյունավետացմանը» (Ատենախոսություն, էջ 15, Սեղմագիր, էջ 12): «Հավանաբար՝ ատենախոսն այս միտքը գրել է 2018թ-ի իրադարձություններից անմիջապես հետո և դրան այլևս չի անդրադարձել, հակառակ դեպքում կիմանար, որ այսուհետ խոսքը գնում է ոչ միայն ավտորիտարիզմի, այլև կոչտ ավտորիտարիզմի ձևավորման, անձի պաշտամունքի դրսերումների մասին, իսկ մասնակցային քաղաքական կյանքը «հեղափոխությունից» հետո շարունակաբար կանխվել ու սահմանափակվել է: Սա չափելի է նաև հետեղափոխության պայմաններում խոսութային՝ դիսկուրս-վերլուծության միջոցով: Բացի այդ, նորից՝ վերոնշյալ ձևակերպումն անգամ ճիշտ լինելու պարագայում գիտական նորույթ հանդիսանալու համար խիստ պարզունակ է:
8. Նույնը վերաբերում է ատենախոսի հաջորդ պնդմանը. «2018թ.-ին գրանցել է դրական կտրուկ տեղաշարժ դեպի կիսաժողովրդավարական վարչակարգ (հիբրիդային կամ անցումային կառավարություն), իսկ քաղաքական մշակույթում սկսել են գերակայել մասնակցային քաղաքական մշակույթի տարրերը» (Ատենախոսություն, էջ 15):

³ Տե՛ս, օրինակ. A. P. Салчинкина, C. B. Хоружая. ПОЛИТОЛОГИЯ. Учебное пособие. Краснодар КубГАУ, 2018; Խաչատրյան Բ.Ա., Հայրապետյան Ս.Ս. ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Եր., 2000:

Տեղեկացնենք, որ մասնակցային քաղաքական մշակույթն ակտիվորեն դրսնորվել է դեռ 2018թ-ի «Թավշյա հեղափոխությունից» առաջ, մասնավորապես՝ 2008թ. (մարտի մելյան հայտնի իրադարձությունները), 2013թ. հունիս (զանգվածային ցույցեր տրանսպորտի գնի թանկացման դեմ), 2015թ.հունիս-սեպտեմբեր («Էլեկտրիկ Երևան»)⁴: Ինքը «Թավշյա հեղափոխությունը» նույնպես նախորդ Վարչակարգի պայմաններում տեղի ունեցած զանգվածային քաղաքական մասնակցության դրսնորում էր: Դարձալ, ատենախոսը կամ դիտարկում է միայն հետհեղափոխական իշխանության կողմից թողարկվող խոսույթն ու կողմնակալ է, կամ չի տիրապետում նախահեղափոխական և հետհեղափոխական զարգացումներին:

9. Բացի վերոնշյալից և ծանոթ լինելով հեղինակի թեկնածուական ատենախոսությանը՝ «ԻՇԽԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՄՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԵՐԻ ՎԵՐԱՌՈՒԹՈՒԹՅՈՒՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)», 2009թ, հարց է առաջանում. ո՞ր չափով է նոր ատենախոսությունն իր բովանդակությամբ և նորույթով կրկնում նախորդին, այդ թվում քաղաքական խոսույթի և ՀՀ-ում դրա ուսումնասիրման մասով: Այս հարցն ուղղվում է մասնագիտական խորհրդին:

Դիտողություններ՝ տպագրված աշխատությունների ցանկի վերաբերյալ.

1. Նկատել ենք, որ և հեղինակի թեկնածուական, և՝ դոկտորական ատենախոսության վերաբերյալ հրապարակված աշխատությունների ցանկում նշված է նույն հոդվածը. Օրդուխանյան Է., Քաղաքական մասնակցության ձևերը քաղաքական խոսույթի համատեքստում: Լրաբեր հասարակական գիտությունների, 3(623), Երևան, 2008, էջ 104-112: Մինչեւ, դոկտորական ատենախոսության համար ներկայացվող ցանկում պահանջվում է նշել ՄԻԱՅՆ թեկնածուական ատենախոսությունից հետո տպագրված աշխատությունները:
2. Ըստ ՀՀ ԲՈԿ-ի պահանջների՝ ներկայացվող ցանկում պետք է ներառված լինեն միայն այն աշխատությունները, որոնցում տպագրված են աշխատության հիմնական մասերը: Մինչեւ, հեղինակի կողմից հրատարակված և ներկայացվող ցանկում կան աշխատություններ, որոնց կապն ատենախոսության թեմայի, օբյեկտի և առարկայի հետ կամ առհասարակ բացակայում է, կամ վիճելի է ու շատ հեռավոր, այդ թվում. Ordukhanyan E., Kumar Gupta S., Vural Uygun S., Iljinich S., Kumar R., **Mahatma Gandhi: A Role Model in Revolutionary Management.** IJRAR International Journal of Research and Analytical Reviews (IJRAR), Volume. 6, Issue 2, June 2019, pp. 993-998.

Հաշվի առնելով ատենախոսության գիտական նորույթին վերաբերող էական թերությունները, ինչպես նաև նշված մնացած բացթողումները՝ ստիպված ենք եզրակացնել, որ ներկայացված՝ «Քաղաքական մշակույթի Էվոլյուցիան Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացներում» աշխատանքը չի համապատասխանում դոկտորական ատենախոսություններին

⁴ Տե՛ս՝ Atanesyan A.B. “Бархатная революция” в Армении: потенциал, достижения и риски политико-протестной активности. – Полис. Политические исследования. 2018. № 6. С. 83-90.

ներկայացվող գիտական պահանջներին և չի բավարարում ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդիմախոս՝

Արթուր Վաղիմիրի Աթանեսյան

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

05.07.2020 թ.

Քաղաքական գիտությունների դոկտոր

Ա. Վ. Աթանեսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Գիտական քարտուղար

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Լ.Ս. Հովսեփյան

